


**Ձեռքի Հեռախոսը Ինքնաշարժ Վարելու Ժամանակ
Քալիֆորնիոյ Նոր Օրենքը- Շուխ 1, 2008**

Շուխ 1, 2008-էն սկսեալ, Քալիֆորնիոյ օրենքը պիտի

- Արգիլէ “ձեռքի հեռախոսի” գործածութիւնը 18-տարեկանէն վեր եղող վարորդներուն, բացի շատ անհրաժեշտ պարագաներէն ինչպէս ոստիկանութեան կամ հանրային ապահովութեան գործակալութեան Շուխ 1, 2011:
- Արգիլէ 18-տարեկանէն վար վարորդներուն ռեւէ տեսակի անթել հեռաձայներու եւ նման առարկաներու գործածութիւնը, նոյնիսկ եթէ կարելի ըլլայ առանց ձեռքերը գործածելու օգտագործել զանոնք, բացի անհրաժեշտ պարագաներէն:

Օրենքի առազին խախտումին հետեւանքը պիտի ըլլայ \$20 տուգանքի վճարում, իսկ երկրորդը \$50 տուգանքի վճարում:

Հակառակ անոր որ Քալիֆորնիայի մէջ շուտով օրենքը ի գօրու պիտի դառնայ 18-տարեկանէն վեր եղող անձերու ինքնաշարժ վարել եւ միաժամանակ հեռաձայնով խօսիլը, սակայն անոնք իրատունք պիտի ունենան գործածել ‘earpiece’, ‘headset’, ‘speaker phone’, ‘blue tooth’ առարկաները: Օրենքը կը թելադրէ վարորդներուն ըլլալ պատասխանատու եւ հասկնալ որ ինքնաշարժ վարած միջոցին հեռաձայնով խօսիլը, ինքնաշարժին մէջ գտնուող ուրիշ անձերու հետ խօսիլը, ուտելը, ձայնապնակ կամ ձայնասփիւտի կայան փոխելը եւ քարտեսի նայիլը կրնան պակսեցնել անձին կեդրոնացումը, որոշում առնելը եւ արագութեան տիրապետումին եւ ճամբուն վրայ ճիշդ դիրքի մէջ գտնուիլը: Այս բոլորը կրնան պատճառել լուրջ վնասներ, կամ նոյնիսկ մահ: Այս պատճարով Քալիֆորնիոյ օրենքը կարգիլէ 18-տարեկանէն վար վարորդներուն ռեւէ տեսակի ձեռքի հեռաձայներու եւ նման առարկաներու գործածութիւնը:

Քշելու ընթացքին պատահած վտանգներ	Ինչ են նախընտրութիւնները
<ul style="list-style-type: none"> • Քշողները ճամբուն ուշադրութիւն չեն դարձնէր երբ հեռաձայնը գործածեն: • Քշողները ճամբուն ուշադրութիւն չեն դարձնէր երբ զբաղած ըլլան հեռաձայնին խոսակցութեամբ ինչ որ կարգէլ քշելու վրայ կեդրոնանալու: (<i>Insurance Information Institute, 2007</i>) • Հեռաձայնով խօսիլը ոչ միայն լուրջ վտանգներ կամ մահ կը պատճառէ, այլ նաեւ պատճառ կը դառնայ ուրիշ քշողներու կեդրոնացումի կորուստին: 	<ol style="list-style-type: none"> 1. Առանց ձեռքերը գործածելու հեռաձայն օգտագործել. 2. Նեղացուցիչ խօսակցութիւն չունենալ քշելու ընթացքին. 3. Երբ հեռաձայնը հնչէ քշելու ընթացքին թող voicemail-ը պատասխանէ. Կրնաս յետոյ կապուիլ այդ անձին հետ. 4. Եթէ կարիքը ունիս մէկուն հեռաձայնելու դադարի քշելէն, ապահով տեղ մը կեցիր եւ խօսիր. 5. Քշելու ընթացքին միշտ նկատի առէք , որ առաջնակարգ պատասխանատուութիւնդ ինքնաշարժ վարելն է. 

Ուշադրութիւն Ծնողներ եւ 18-տարեկանէն փոքր Վարորդներ

Քալիֆորնիոյ օրենքը պիտի արգիլէ “ձեռքի հեռախոսի” գործածութիւնը 18-տարեկանէն վեր եղող Վարորդներուն, իսկ 18-տարեկանէն վար վարորդներուն պիտի արգիլէ ռեւէ տեսակի անթել հեռաձայներու գործածութիւնը: Հակառակ անոր որ ձեռքի հեռախոսը բոլոր տարիքի անձերու կեդրոնացումը կրնայ շեղել, հեռախօսով խօսակցութիւնը այլ աւելի վտանգավոր կրնայ ըլլալ անփորձարու երիտասարդներու համար:

Ուշադրութիւն Գործաւորներ

Եթէ գործաւոր մը աշխատանքի ընթացքին ինքնաշարժի արկած ունենայ, գործատէրը եւ գործաւորը պատասխանատու կը նկատուին հաւասարապէս: (*Business and Legal Reports, 2007*). Գործատէրը պետք է-

- Ստուգէ Կարավարական եւ գործատէրի օրէնքները ու գործաւորներուն գրութեամբ զգուշանէ ձեռքի հեռաձայն գործածումի օրէնքներու մասին
- Տեղեկացնէ գործաւորներուն որ քշելու ատեն ձեռքի հեռախօս պետք չէ գործածել
- Եթէ գործաւոր մը կարիքը ունենայ մէկուն հեռաձայնելու, քշելէն պետք է դադարի, ապահով տեղ մը կենայ եւ խօսի.